Հիշենք մեր արժեքը Աստծո համար

Ընտրեք հետևյալ տարբերակներից մեկը կամ երկուսը, որոնք կօգնեն ձեզ ավելի լավ հասկանալ և գնահատել ձեր արժեքը Աստծո համար:

Տարբերակ 1.

Ուսումնասիրեք Հիսուս Քրիստոսի Քավությունը և խորհեք ձեր հանդեպ Նրա սիրո մասին: Կարող եք կարդալ հետևյալ հատվածներից մի քանիսը. Եսայիա 53.3–5, Ղուկաս 22.41–44, Հովհաննես 3.16–17, Ա Կորնթացիս 6.11, 19–20, Ալմա 7.7, 10–13: Կարող եք նաև գտնել տարբեր հատվածներ ուսումնասիրելու համար:

Կարող եք գրել խաչաձև հղումներ, որոնք ցանկանում եք հիշել: Կարող եք դրանք նշել ձեր սուրբ գրություններում՝ Վարդապետություն և Ուխտեր 18.10–11 հատվածների կողքին, գրել դրանք ձեր ուսումնական օրագրում կամ օգտագործել ձեր Gospel Library հավելվածը՝ պիտակներ կամ հղումներ ստեղծելու համար:

Տարբերակ 2.

Ուսումնասիրեք, թե ինչ են ուսուցանել Եկեղեցու ղեկավարները՝ Աստծո համար մեր արժեքի մասին: Օգտագործեք Gospel Library հավելվածը կամ այլ աղբյուրներ՝ համապատասխան ուղերձներ կամ ելույթներ գտնելու համար: Կարող եք որոնել այսպիսի եզրույթներ. «արժեք» կամ «Աստծո սեր», որոնք կօգնեն ձեզ գտնել նյութեր: Երեխաների միության նախկին գերագույն նախագահ քույր Ջոյ Դ. Ջոնսի հետևյալ խոսքերը այն նյութերի օրինակներից է, որոնք դուք կարող եք գտնել:

Թույլ տվեք ինձ ընդգծել *արժեք* և *արժանավորություն* երկու կարևոր բառերը տարբերակելու անհրաժեշտությունը: Դրանք նույնը չեն: Հոգևոր *արժեքը* նշանակում է արժևորել մեզ այն ձևով, ինչպես Երկնային Հայրն է արժևորում մեզ, և ոչ թե աշխարհը: Մեր արժեքը որոշվել է նախքան մեր այս աշխարհ գալը: «Աստծո սերն անսահման է և այն կտևի հավերժ»:

Մյուս կողմից, *արժանավորությունը* ձեռք է բերվում հնազանդության միջոցով: Եթե մեղանչում ենք, մենք պակաս արժանավոր ենք դառնում, բայց երբեք արժեզուրկ չենք: Մենք շարունակում ենք ապաշխարել և ձգտել նմանվել Հիսուսին մեր անձեռնմխելի արժեքով: Ինչպես Նախագահ Բրիգամ Յանգն է ուսուցանել. «Ամենափոքր, ամենացածր հոգին այժմ երկրի վրա . . . արժե աշխարհներ»: Ինչ էլ որ լինի, մենք միշտ արժեք ունենք Երկնային Հոր աչքում: (Ջոյ Դ. Ջոնս, «Անչափելի արժեք», *Լիահոնա,* նոյեմբեր 2017, 14)

© 2023 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_091-1